

Ա Ր Ձ Ա Ն Ա Գ Ր ՈՒ Թ Յ ՈՒ Ն

Հաշմանդամություն ունեցող անձանց հարցերով զբաղվող մարզային
հանձնաժողովի նիստի

Մասնակցում էին հանձնաժողովի անդամները և «Արմավիրի զարգացման
կենտրոն» ՀԿ-ի տնօրեն Նաիրա Առաքելյանը:

Օրակարգում՝

1. «Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների
համար» եռամյա ծրագրի շրջանակներում Արմավիր քաղաքում բացված
«Արևածագ» երեխաների աջակցության կենտրոնի կողմից իրականացվող
ծառայությունների ներկայացում:

/Զեյ՝ Ն. Առաքելյան/

Օրակարգի հարցի հետ կապված հանդես եկավ «Արմավիրի զարգացման
կենտրոն» հասարակական կազմակերպության տնօրեն Նաիրա Առաքելյանը: Նա
նշեց, որ «Արմավիրի զարգացման կենտրոն» ՀԿ-ն 2016թ.-ից սկսել է իրականացնել
«Համայնքահեն ծառայություններ հաշմանդամություն ունեցող երեխաների համար»
եռամյա ծրագրի, որը ֆինանսավորվում է «Սեյվ դը չիլդրեն» կազմակերպության
կողմից:

Ծրագրի շրջանակներում Արմավիր քաղաքում բացվել է «Արևածագ» երեխաների
աջակցության կենտրոնը, որը հաշմանդամություն ունեցող 2-18 տարեկան
երեխաներին մատուցում է էրգոթերապևտի, լոգոպեդի, արտ թերապևտի, խաղային
թերապևտի, սոցիալական աշխատողի, հոգեբանի աջակցություն, ինչպես նաև
իրականացնում է կարողությունների զարգացման դասընթացներ ծնողների և
խնամակալների համար, մասնագիտական խորհրդատվություններ՝ իրավական,
առողջապահական, սոցիալական ոլորտների վերաբերյալ: Կենտրոնն իրականացնում
է նաև իրազեկման քարոզարշավ համայնքներում՝ տեղեկացնելով մատուցվող
անվճար ծառայությունների մասին: Կենտրոնն ունի հարմարեցված մեքենա և
շարժական թիմը ծառայություններ է մատուցում նաև գյուղական համայնքներում,
ներկայումս նաև՝ Արտաշատում:


Կենտրոնն անցյալ տարի սպասարկել է 125 երեխայի, ներկայումս ծառայություններ
է մատուցում 82 երեխայի: Ն. Առաքելյանը նշեց, որ կենտրոնը համագործակցում է
համայնքների ղեկավարների, դպրոցների տնօրենների, բուժամբուլատորիաների
ղեկավարների, քաղաքի հատուկ դպրոցի, Արաբկիր վերականգնողական կենտրոնի
Արմավիրի մասնաճյուղի հետ: Համագործակցության արդյունքում լինում են
ուղղորդումներ, մասնագետների փորձի փոխանակում:

Ն. Առաքելյանը նշեց, որ ցանկալի կլիներ համագործակցել մանկական
հոգեբույժների հետ և մարզպետի տեղակալ տիկին Լ. Մուրադյանին խնդրեց
հանդիպում կազմակերպել մարզի հոգեբույժների հետ՝ կենտրոնի գործունեությունը
նրանց ներկայացնելու և անհրաժեշտության դեպքում նրանց աջակցությունը
ստանալու համար:

Տիկին Մուրադյանը ՀԿ-ների ղեկավարներին հարցրեց, թե հաշմանդամ երեխաների ամառային հանգստի հետ կապված ինչ է արվել: Ն. Առաքելյանը տեղեկացրեց, որ կենտրոնի 12 շահառու երեխաներ 10 օրով մեկնել են Ստեփանավան՝ ճամբար, մասնակցել տարբեր միջոցառումների, խաղերի, վիկտորինաների: «Նաիրի հաշմանդամ երեխաների ծնողների» հասարակական կազմակերպության տնօրեն Գ. Ազոյանն ասաց, որ ամառային ճամբարի հետ կապված ծրագիր չի արվել, սակայն ՀԿ-ի շահառու երեխաների համար «Հացիկ» համայնքում կազմակերպվել է բակային ճամբար:

Ամփոփելով նիստը, տիկին Մուրադյանը շնորհակալություն հայտնեց Ն. Առաքելյանին կատարված օգտակար աշխատանքի համար և հույս հայտնեց, որ ՀԿ-ների և պետական կառույցների համագործակցված աշխատանքի արդյունքում հնարավոր կլինի ըստ ամենայնի աջակցել հաշմանդամություն ունեցող անձանց՝ նրանց հասարակությանն ինտեգրելու և հաշմանդամության հետ կապված ամենատարբեր խնդիրների լուծման հարցում:

Հանձնաժողովի նախագահ՝



Լ.Մուրադյան

Արձանագրող՝ Հ. Հարությունյան